ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

Ս Ե Վ Ա Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ/ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	**12 / ք. Սևան, գ. Գագարին, գ. Վարսեր, գ. Ծաղկունք, գ. Գեղամավան, գ. Դդմաշեն, գ. Զովաբեր, գ. Լճաշեն, գ. Նորաշեն, գ. Չկալովկա, գ. Ծովագյուղ, գ. Սեմյոնովկա/**
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ (ՄԱՐԴ)	45033
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ	Սարգիս Մուրադյան
ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄ	Հայ, փոքրամասնություն՝ ռուս, եզդի, քուրդ, ասորի, հույն, ուկրաինացի
ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՀԱՍՑԵՆ	sevancity.am

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2021թ. համայնքների խոշորացմամբ պայմանավորված՝ Սևան համայնքը ներառում է Սևան քաղաքը, Գագարին, Վարսեր, Գեղամավան, Ծաղկունք, Դդմաշեն, Զովաբեր, Լճաշեն, Նորաշեն, Չկալովկա, Ծովագյուղ, Սեմյոնովկա գյուղերը:

Ք. Սևան

Սևանը քաղաք է Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Սևանը հնում անվանել են Գեղամա ծով: 1840-ական թվականներին Սևանի շրջանը սկսեց բնակեցվել ռուսներով: Ցարական կառավարությունը բնակեցնում էր Անդրկովկասը՝ նպատակ ունենալով այդ շրջանում ամրապնդել իր հենարանը: Աղանդավորների հոսքը դեպի Անդրկովկաս սկսվել էր դեռևս 30-ական թվականներին: Այնուհետև աղանդավորները Ելենովկա են գալիս Շամախիից, Թիֆլիսից և Անդրկովկասի այլ վայրերից: 1851 թվականին Ելենովկայում արդեն ապրում էր 108 ընտանիք (505) մարդ: Ելենովկացիների իսկական հայրենիքը, ըստ ցուցակներում պահպանված հավաստի տեղեկությունների, Տամբովի, Պենզայի, Օրենբուրգի, Տավրիայի և ռուսական այլ նահանգներն են, որտեղից նրանք արտաքսվել էին տարբեր ժամանակներում: 1935թ. այն վերանվանվեց Սևան: 1961թ. բնակավայրին շնորհվեց շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ /մեկ ավանով և տասը գյուղով/, 1967թ.-ին՝ հանրապետական ենթակայության: Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ Սևանը դարձավ ինքնուրույն համայնք՝ ներառելով Սևան քաղաքը, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը, Գագարին գյուղը:

Գ. Գագարին

Հիմնադրվել է 1955թվականինորպես Աթարբեկյան ՀԷԿ-ին կից բանվորական ավան, և կոչվել է Գագարինավան: 1990-ական թթ. վերածվել է գյուղի: Գագարինավանը 1961-1995 թթ. համարվել է քաղաքատիպ ավան, իսկ սկսած 1995-ից ՝ մտել Գեղարքունիքի մարզի մեջ՝ որպես Սևան համայնքի Գագարին թաղամաս:

Գ. Վարսեր

- Գյուղի մասին մեզ հայտնի առաջին հիշատակումը 9-րդ դար է, սակայն գյուղն ավելի հին է: Դեռ մեր թվարկությունից առաջ այստեղ բնակատեղի է եղել: - Մինչև 1947 թ. գյուղը կոչվել է Չըռչըռ: Հղում է արվում Չըռչըռ ջրվեժին, որից էլ գյուղը ստացել էր անվանումը: Վարսեր (նշանակությունը՝ կնոջ չհյուսած երկար մազեր) համայնքի մասին մատենագրական վկայությունները սակավաթիվ են: Գյուղը պատմության մեջ հիշատակվում է դեռևս 9-րդ դարից, սակայն այն ունի ավելի վաղ պատմություն: Դրա վառ ապացույցն են 1960-ական թթ. գյուղի հարավարևմտյան մասում պեղումների ժամանակ հայտնաբերված հնագիտական նյութերը: 874 թ. Վարսերն եղել է վանքապատկան գյուղ՝ պատկանելով Սևանավանքի Սբ. Առաքելոց և Սբ. Աստվածածին եկեղեցիներին: Համաձայն 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հիշատակումների՝ իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին (հետագայում՝ Աշոտ Ա թագավորը) այս գյուղը շրջակա մի քանի այլ բնակավայրերի հետ նվիրել է Սևանավանքի Սբ. Առաքելոց եկեղեցուն: Ըստ ավանդության՝ գյուղի անունը առաջացել է այսպես. մի աղջիկ անզգուշորեն ընկնում է գետը և խեղդվում: Անցորդները, նկատելով ջրի երեսին փռված աղջկա մազերը, աղաղակում են՝ «Վարսերը, վարսերը»: Դրանից հետո գյուղը կոչվում է Վարսեր: Վարսեր գյուղը մտնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Մազազ գավառի մեջ, իսկ ավելի ուշ՝ պարսկական տիրապետության ժամանակ, ընդգրկված էր Երևանի խանության Գեղարքունիքի շրջան Ծաղկունյաց նահանգի կազմում: Գյուղը հիշատակվում է նաև 18-րդ դարի երկրորդ կեսին Ծաղկունյաց գավառում Սևանավանքին հարկատու գյուղերի ցանկում: Գյուղի պատմության նոր փուլը սկսվում է 1828 թ., երբ Երևանի խանության տարածքն անցավ Ռուսական կայսրությանը, և հնարավորություն ստեղծվեց Պարսկահայաստանից և Արևմտյան Հայաստանից ներգաղթ կազմակերպել: Այդ ժամանակ շուրջ 9 հայ ընտանիք վերաբնակեցվում է Զանգու գետի ափին և նախկին Վարսերի փլատակների վրա հիմնում նոր Չըռչըռ գյուղը, որն այդպես էլ մնում է մինչև 1947 թ.:

Գ. Ծաղկունք

Ծաղկունքը հնագույն բնակավայր է՝ Վարաժնունիք - Ծաղկունք - Ծաղկունեաց (Ծաղկունիք) - Ծաղկաձոր (Դարաչիչակ - Զընջըռլու) գավառի շուրջ 40 հնագույն

բնակավայրերից մեկը, դեռևս մեր թվագրությունից առաջ 520 թ., ունեցել է 45 տուն, ճանաչվել Վարաժնունիք մեծածավալ գավառի վարչական կենտրոն: Գյուղի տարածքը ընդհատումներով շուրջ 4 կմ երկարություն է ունեցել: Այդ մասին է վկայում այն փաստը, որ գյուղից դեպի արևելք ձգվող տարածքներում կան տնատեղեր, գերեզմաններ, խաչքարեր: «Բոստաններ» և «Կորոբել» հանդամասերում հայտնաբերել են զինվորական տարբեր տեսակի նշտարներ, սրեր, շեփորանման գործիքներ, կճուճներ, պուտուկներ, քասաներ, աղամաններ և այլ գործիքներ: 1976 թ. տրակտորիստները կալատեղերի գոմերի մոտ փորելիս հայնտաբերել էին կանացի զարդեր: Զարդերը ներկայումս գտնվում են Երևանի ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում, որոնք 3.5 հազար տարվա պատմություն ունեն: Շատ ավելի ուշ՝ 1828 թվականին, Վարաժնունիք-ն անցնում է Ռուսաստանին: Հենց այս թվականն էլ համարվում է Ծաղկունք ներկայիս գյուղի հիմնադրման պաշտոնական թվականը: Այդ թվականին է, որ Իրանի Մակու քաղաքից գաղթած 17 ընտանիք՝ 102 հոգի, հաստատվում է Ծաղկունքում, ինչպես նաև ընտանիքներ են գաղթում Խոյից և Վանից 1828 - 29 թթ: 1849 թվականից մինչև 1917 թվականը գավառն ընդգրկվում է Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի կազմում: 1918-1920 թթ. առաջին անկախ Հայաստանի Ն. Բայազետի Դարաչիչակ Մահալի կազմում, 1920-1930 թթ: եղել է հայկական ԽՍՀ Ն. Բայազետի գավառի կազմում, 1930 թ. սեպտեմբերի 9-ին մտել է նոր կազմավորված Ներքին Ախտայի վարչական կազմի մեջ, 1937 թ. դեկտեմբերի 31-ից անցել է Սևանի շրջանի վարչական տարածքի մեջ, 1991 թ. սեպտեմբերի 21-ից հանդիսանում է անկախ Հայաստանի հանրապետության բնակավայր Սևանի շրջանում, իսկ արդեն 1996 թվականից՝ գյուղ Գեղարքունիքի մարզում:

Գ. Գեղամավան

Գեղամավան գյուղը (նախկին անունը Շահրիզ) հիմնադրվել է 1828 թվականին : Նրա առաջին բնակիչները եղել են Պարսկաստանի Մակուի շրջանի Անձուկ գյուղից գաղթած 400 գաղթականներ : Սակայն կան գյուղի տարածքում VII դարում բնակության մասին վկայող հնագիտական տեղեկություններ: 1946 թվականին գյուղը անվանափոխվել է և մինչև այժմ կոչվում է Գեղամավան:

Գ. Դդմաշեն

Դդմաշեն («դեմ-դեմ-ա-շեն»՝ դեմ դիմաց շինված) գյուղի մասին մատենագրական տվյալները սակավ են, սակայն գյուղի տարածքում եղած ամրոցների, հնագույն դամբարանադաշտերի առկայությունը վկայում են հնագույն բնակավայրի գոյության մասին: Գյուղի անվան ստուգաբանության վերաբերյալ կան տարբեր վարկածներ: Ոմանք պնդում են, որ ձկնառատ Հրազդան գետի ափին գտնվող Դդմաշենը Մակուից եկած հայերը կոչել են իրենց նախկին բնօրրանի՝ Դուդմա կամ Տուտմա («դուդմա» պարսկերեն նշանակում է ձուկ) գյուղի անունով: Ազգագրագետ Երվանդ Լալայանի վարկածով՝ գյուղի անունը առաջացել է «դդում» բառից (իբր դդում շատ են մշակել), սակայն դդմաշենցի բանահավաք Գուրգեն Ստեփանյան : Ոմանք Դդմաշեն անունը համարում են Սբ. Թադևոսի անվան աղավաղումից առաջացած, իսկ մի մասն էլ գտնում է, որ Դդմաշենը հնում կոչվում էր Փարզանակերտ: Ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը նույնացնում է Դդմաշենը 1494 թ. Ավետարանում հանդիպող Դէմդէմաշեն բնակավայրին: Գյուղը, որի հին անունը, ըստ երևույթին, հենց Դեմդեմաշեն է եղել, մտնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Մազազ գավառի մեջ, իսկ ավելի ուշ՝ պարսկական տիրապետության ժամանակ, ընդգրկված էր Երևանի խանության Գեղարքունիք շրջան Ծաղկունյաց նահանգի կազմում:Գյուղի պատմության նոր փուլը սկսվում է 1828 թ., երբ Երևանի խանության տարածքն անցավ Ռուսական կայսրությանը, և հնարավորություն ստեղծվեց Պարսկահայաստանից և Արևմտյան Հայաստանից ներգաղթ կազմակերպել: Համաձայն ռուս պատմաբան Իվան Շոպենի արձանագրած տվյալների՝ Տուտմաշեն գյուղում Ռուսաստանին անցնելու պահին (1828-1829 թթ.) բնակվում էր 60 տուն (391 հոգի) Պարսկաստանից և 17 տուն (77 հոգի)

Օսմանյան կայսրությունից ներգաղթած բնակչություն: Հավանաբար ներգաղթած բնակչության մի մասը տեղափոխվում է այլ բնակավայրեր, քանի որ հետագայում բնակչության նվազում է արձանագրվում: Խորհրդային շրջանում գյուղն ընդգրկվեց Սևանի շրջանի կազմում:

Գ. Զովաբեր

Զովաբեր (նշանակությունը՝ զով բերող) գյուղի մասին մատենագրական վկայություններ չունենք, սակայն հետքերն առկա են և միջնադարում, և ավելի ուշ շրջանում: Գյուղի զբաղեցրած տարածքը մտնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Մազազ գավառի մեջ, իսկ ավելի ուշ՝ պարսկական տիրապետության ժամանակ, ընդգրկված էր Երևանի խանության Գեղարքունիքի շրջան Ծաղկունյաց նահանգի կազմում: Չնայած գյուղի տարածքը (Հրազդան գետի երկու ափերին) բնակեցված է եղել զարգացած միջնադարում (9-16-րդ դարեր), սակայն 16-րդ դարից սկսած ամայացել է՝ ենթարկվելով նաև 1604 թ. շահաբասյան բռնագաղթին: Դա է պատճառը, որ գյուղի տարածքում բացակայում են 17-18-րդ դարերով թվագրվող հուշարձանները, և միայն 19-րդ սկզբին, այստեղ հաստատված մակվեցի գաղթականության շնորհիվ, գյուղը նոր կյանք է ստանում: Գյուղի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Երևանցի կաթողիկոսը: Համաձայն այդ տեղեկությունների՝ գյուղն ընդգրկված էր Երևանի երկրի Ծաղկունյաց նահանգի կազմում և սկզբնապես պատկանում էր երևանցի խոջա Սեթին և իր թոռ՝ Սահակ Քալանթարին, ով գյուղի ունեցվածքի 6-րդ մասը վաճառում է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին: Այնուհետև, գյուղը մինչև՝ 19-րդ դարի սկիզբ, շարունակում է մնալ որպես եկեղեցական կալվածք: Գյուղի պատմության նոր փուլը սկսվում է 1828 թ., երբ Երևանի խանության տարածքն անցավ Ռուսական կայսրությանը, և հնարավորություն ստեղծվեց Պարսկահայաստանից և Արևմտյան Հայաստանից ներգաղթ կազմակերպել: Խորհրդային շրջանում գյուղն ընդգրկվեց Սևանի շրջանի կազմում, իսկ 1978 թ. վերանվանվեց Զովաբեր:

Գ. Լճաշեն

Լճաշեն գյուղի պատմությունը սկիզբ է առնում վաղնջական ժամանակներից: Որպես բնակավայր սկզբնավորվել է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջին: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին , այն վերածվել է ամրոցի: Հնագույն քաղաք ամրոցի /միջնաբերդով/ պարիսպների մնացորդները պահպանվել են գյուղից 2 կմ հարավ և հարավ-արևելք, ունեն 3-4 մ, որոշ տեղերում՝ 5-7մ հաստություն: Հնագիտական պեղումների և երկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերվել են 3-2-րդ հազարամյակի գտածոներ: Գյուղի տարածքը իսկական թանգարան է բաց երկնքի տակ: Գյուղի արևելյան կողմում, նախաուրարտական բնակատեղի մոտ, մեծ ու անտաշ քարաժայռի վրա փորագրված է գյուղի մասին առաջին գրավոր հիշատակումը Արգիշտի Առաջինի մ.թ.ա. 776թ այստեղ թողած սեպագիր արձանագրությունը: Լճաշենի հուշարձանախումբը, Իշտիկունիի հավաքածուն մեր նախնիների, նախաուրարտական և ուրարտական հայկական հարուստ մշակույթի պերճախոս վկան են՝ լայնորեն հայտնի տարբեր երկրների գիտական շրջաններում: Գյուղը վերակենդանացել է 1928թ-ին, երբ հիմնավորվել են Մակվից, Դիադենից, Բայազետից գաղթած 58 հայ ընտանիքներ: Գյուղը կոչվել է Պորտակ, Օրդակլու, Էրդակլու, Օրդաքլու: 1946թ-ի ապրիլին գյուղն անվանվել է Լճաշեն:

Գ. Նորաշեն

Նորաշեն գյուղը նախկինում անվանվել է / Էֆենդի, Ռախմաքենդ / հետագայում, 1938թ. հունվարից Հայաստանի կառավարության առաջարկով նախ Քարաշեն, ապա Նորաշեն: Գյուղը հին բնակավայր է: Խորհրդային տարիներին մասն է կազմել Հայկական ԽՍՀ Նոր Բայազետի գավառի, 1930 թվականից Ախտայի (հետագայում՝ Հրազդանի), իսկ 1937 թվականից՝ Սևանի շրջանի: 1995 թվականից մտնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի մեջ:

Վերանվանվել է Նորաշեն 1938 թ. հունվարի 4-ին:Նրա հարավ–արևմտյան մասում պահպանվել են Ք.Ա. 2-1-ին հազարամյակի երկու դամբարանադաշտեր: Գյուղի շրջակայքում է գտնվում բերդ ամրոցը: Այդ ամենը մտել է Կիեխունի կոչվող երկրի ընդհանուր տոհմացեղային միության մեջ: 1830թ. Բիթլիսից, Մշո, Վանի գավառներից ներգաղթած մի քանի հայ ընտանիքներ այստեղ հաստատել են մշտական բնակություն:

Գ. Չկալովկա

Չկալովկա (նախկինում՝ Ալեկսանդրովկա, Աղեկսանդրովկա, Զեյնալ [Աբեդին], Զեյնալ Աղալի, Պալա Պոստնիկ), գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Նախկինում Ալեքսանդրովկա անվան տակ ընդգրկված է եղել Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում: Աչքի է ընկնում խիստ կլիմայով: Չկալովկա է կոչվել (26.04.1946թ) ի հիշատակ ականավոր օդաչու Վ. Չկալովի: Հիմնադրել են Ցարական Ռուսաստանի Պովոլժիեի, Սարտովի, Տամբովի նահանգներից եկած ռուսները 19-րդ դարի 1-ին կեսին և մինչև 1926 թվականը ռուսաբնակ էր: 04.12.1995 թվականին մտել է ՀՀ Գեղարքունիքի մարզի մեջ:

Գ. Ծովագյուղ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքը հիմնադրվել է 1830թ.ին: Բնակչությունը գաղթել է Արևմտյան Հայաստանի Արծափ գյուղից: Նախկին անունները՝ Ճիպոտիկ, Չիբուխլու: Ծովագյուղը մինչև 1935 թվականը կոչվել է Չիբուխլու: Գյուղը մշտական կապերի մեջ է եղել Սևանա վանքի հետ: Ծովագյուղում և շրջակայքում պահպանվել են Քառատափ գյուղատեղին, եկեղեցի, ամրոցի ավերակներ (Ք.ա. առաջին հազարամյակ), գերեզմանոցներ, խաչքարեր: Գյուղն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է:

Գ.Սեմյոնովկա

Սեմյոնովկա գյուղը հիմնադրվել է 1845 թվականին ռուսաստանից աքսորված 7 աղանդավորների մոլոկանների կողմից: Գյուղի փոխարեն անտառ է եղել: Մոլոկանները հատել են ծառերը ու փայտե տներ կառուցել: Սկզբում մի քանի ընտանիք է ապրել: Գյուղն էլ անուն չի ունեցել: Հետագայում ձմռան մի օր, երբ ճանապարհը փակվել է, ռուս ճանապարհորդ Սեմյոնովը 2 օր մնացել է գյուղում, ում անունով էլ գյուղը կոչել են Սեմյոնովկա: Այն բնակեցված է եղել մոլոկաններով, ռուսներով և քրդերով: Առաջին հայ ընտանիքը գյուղում բնակություն է հաստատել 1938-39թթ:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սևան համայնք

Սևան քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին՝ լճից 200-250մ հեռավորության վրա: Սևանը գտնվում է Սևանալճի հյուսիս-արևմտյան ափին, Հրազդանի վերին հոսանքի ավազանում: Ձգվում է Լճաշեն գյուղի մոտից մինչև Սևանի թերակղզի և գրավում Երևան-Դիլիջան, Սևան-Մարտունի խճուղիների հանգույցում տարածվող եռանկյունաձև հարթավայրն ու դրան կից լեռնալանջերը: Սևան քաղաքը՝ ներառյալ **Գագարին** բնակավայրը, զբաղեցնում է 1784.68հա հողատարածք: Սևանը քաղաք է Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Սևանա

լճի հյուսիսարևմտյան ափին, մայրաքաղաք Երևանից 66 կմ հյուսիս-արևելք և մարզկենտրոն Գավառից 35 կմ հյուսիս:

Վարսեր բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1915 մետր բարձրության վրա, Սևան քաղաքից փոքր-ինչ հարավ-արևմուտք, Հրազդանի ցամաքած հունի հովտում, լեռնալանջի վրա: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 50 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից 40կմ հեռավորության վրա : Վարսեր բնակավայրը զբաղեցնում է 3659,59 հա հողատարածք:

Ծաղկունք բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1850 մետր բարձրության վրա, Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Հրազդան գետի աջափնյակում, մայրաքաղաք Երևանից՝ 23.82կմ , մարզկենտրոնից 45 կմ հյուսիս-արևմուտք, Սևան համայնքից 7 կմ հյուսիս-արևմուտք: Բնակավայրը փռված էՓամբակի լեռների բազուկը կազմող Սուրբ Հովհաննես, Աբազանց դոշ, Խաչիդոշ սարերի և Թափիդոշ բլրի ստորոտին: Ծաղկունք բնակավայրը զբաղեցնում է 3789,28 հա հողատարածք:

Գեղամավան բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում, Հրազդան գետի ձախակողմյան ափին: Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից կազմում է 60կմ, մարզկենտրոնից՝ 37 կմ: Գեղամավան բնակավայրը զբաղեցնում է 3128.3հա հողատարածք:

Դդմաշեն բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1800մ բարձրության վրա, մայրաքաղաք Երևանից՝ 58.5կմ, մարզկենտրոնից 52 կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 4345.22 հա տարածք:

Զովաբեր բնակավայրը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի հարավարևմտյան բազուկների ստորոտում, Հրազդան գետի վերին հոսանքի աջ ու ձախ ափերին, ծովի մակերևույթից 1750մ բարձրության վրա, մայրաքաղաք Երևանից՝ 55կմ, մարզկենտրոնից 60կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 2876.54հա:

Լճաշեն բնակավայրը գտնվում է Գեղամա և Փամբակի լեռնաշղթաների գոգավորությունում Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Գեղամա կանաչ լեռները որոշակի թեքություններով իջնում են գյուղի արևմտյան մասերը՝ կազմելով օղակաձև լեռնաբազուկներ: Իսկ արևելյան մատույցներում Սևանա Լիճն է: Գտնվում է ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 62կմ է, մարզկենտրոնից՝ 32կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 5954հա:

Նորաշեն բնակավայրը արևելքից սահմանակից է Ծովազարդ բնակավայրին, իսկ հյուսիս-արևմուտքից Չկալովկա բնակավայրին: Գտնվում է ծովի մակերևույթից 1940մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 69.6կմ է, մարզկենտրոնից՝ 24կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 1303.95հա:

Չկալովկա բնակավայրը գտնվում է Սևանա լճի արևմտյան ափին: Բնակավայրը արևելքից սահմանակից է Նորաշեն բնակավայրին, իսկ հյուսիս-արևմուտքից Լճաշեն բնակավայրին: Գտնվում է ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 64.9կմ է, մարզկենտրոնից՝ 27կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 2585.0հա:

Ծովագյուղ բնակավայրն իր աշխարհագրական դիրքով Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամփակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում: Համայնքի տարածքով է անցնում Ձկնգետը: Գտնվում է ծովի մակերևույթից 2000մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 75.6կմ

է, մարզկենտրոնից՝ 48.1կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 7314,92 հա:

Սեմյոնովկա բնակավայրը գտնվում է Արեգունի և Գեղամա լեռների արանքում: Հարավային մասով անցում է Ձկնգետը, որը թափվում է Սևանա լիճը: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2100մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 80կմ է, մարզկենտրոնից՝ 55կմ հեռավորության վրա: Բնակավայրի վարչական տարածքը զբաղեցնում է 3240հա:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	500-600
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-12.5
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	+22.5

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ	**12**
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆ	sevan.gegharquniq@mta.gov.am
ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՀԱՍՑԵՆ	sevancity.am
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ	0261-4-00-00
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ	0261-2-43-23
ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԿՈԴԸ	(374)261
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ (ԱՅՈ, ՈՉ)	այո
ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԴԱՍԻՉԸ	1501, 1502, 1505 Սևան 1506 Գագարին 1507 Գեղամավան 1508 Դդմաշեն 1509 Զովաբեր 1510 Լճաշեն 1511 Ծաղկունք 1512 Ծովագյուղ 1513 Նորեշեն

	1514 Չկալովկա 1515 Վարսեր
ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ (ԱՅՈ, ՈՉ)	այո
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ (ԱՅՈ, ՈՉ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	01.01.2025թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ
1. Հաշվառված բնակչության թվաքանակը	45033
2. Գրանցված ծնունդների քանակը	267
3.Մահացության դեպքերի քանակը	314
4.Ամուսնությունների քանակը	142
5.Ամուսնալուծությունների քանակը	33
6.Տնային տնտեսությունների թիվը	11608
7.Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	1081
8.Կենսաթոշակառուների քանակը	8087
9. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	5502

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2025թ.
1. Գրադարանների քանակը	10
2. Արվեստի դպրոցների քանակը	2
3. Երաժշտական դպրոցների քանակը	2
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը, որից՝ Մանկապարտեզներ Նախադպրոցական այլընտրանքային ծառայություններ Հանրակրթական դպրոցների հենքի վրա նախակրթարաններ	21 11 3 7
5. Հանրակրթական դպրոցների քանակը	18
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	1
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	1
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	1

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2025թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ2)	725316
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	190
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	4600

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2025թ.
1.Հողեր, ընդամենը (հա)	39689.27
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	31686.16
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը(հա)	2437.43
4.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	10620
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	12199
7. Խոզերի գլխաքանակը	2550
8.Գյուղատնտեսական տեխնիկա	51
8.1տրակտորներ (քանակը)	33
8.2կոմբայններ (քանակը)	18
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	3148

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1.Էլեկտրական ենթակայանների քանակը	79
2.Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3.Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	61.524
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	առկա է
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	344
6.2 Էքսկավատորների քանակը	19
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	8
6.4 Գրեյդերների քանակը	3
6.5 Աղբատար մեքենաների քանակը	3
6.6Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաներիքանակը	7
6.7Վակումային փոշեկուլմեքենաների քանակը	1
6.8Ավտոաշտարակների քանակը	25
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	10.925
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	այո - 8
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝ 2024թ.

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1.Ընդամենը եկամուտներ	2694493.7	2577632.2
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	441780.0	409128.9
2.1 հողի հարկ	17000.0	7493.1
2.2 գույքահարկ	424788.0	401635.4
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	2201393.7	2173454.0
3.1 դոտացիա	1355089.9	1355089.9
3.2 սուբվենցիա	846303.8	818364.1
4.Մուտքեր հողի օտարումից	360000.0	289229.0

Համայնքի վարչական բյուջերի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	1947907.3	1846361.7

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	1720000.0	1553788.3

Ֆոնդային բյուջեի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	1793637.0	1610662.2

11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ	115
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	72
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	313000.0
3. Ավագանու անդամների թվաքանակը	25

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	***Ակնկալվող լուծումը***
ճանապարհաշինություն	ՀՀ կառավարությունից տրվող սուբվենցիոն ծրագրեր, համայնքային բյուջեի միջոցներ

զբաղվածություն, աշխատատեղերի ստեղծում	փոքր և միջին բիզնեսի զարգացում, գործարար միջավայրի բարելավում, համայնք-մասնավոր հատված համագործակցություն, ներդրումային ծրագրերի իրականացում, փոքր արտադրությունների հիմնում, զբոսաշրջային գործի զարգացում
ենթակառուցվածքների բարելավում	ներդրումային և դրամաշնորհային ծրագրերի իրականացում, համայնքային բյուջեի միջոցներ
խաղահրապարակների և մարզահրապարակների բարեկարգում, կառուցում	համայնք-մասնավոր հատված համագործակցություն, ներդրումային ծրագրերի իրականացում
բնակարանային ֆոնդի պահպանություն	համատիրությունների գործունեության որակական բարելավում, հրատապ ծրագրերի իրականացում, բնակարանային ֆոնդի կառավարման նոր մեխանիզմների ներդրում
աղետների ռիսկերի կառավարում	հրատապ ծրագրերի իրականացում